ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Պետական գնումներում վառելիքի և գրասենյակային թղթի ձեռքբերման համառոտ ուսումնասիրություն /2018-2019թ I կիսամյակ/

Երևան 2019

Սույն զեկույցի թողարկումը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության օժանդակության շնորհիվ, դրամաշնորհ N19996: Զեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության տեսակետների և դիրքորոշումների հետ:

Ծրագրի ղեկավար՝ Արմենուհի Բուռնազյան

Ուսումնասիրության իրականացնող՝ Աստղիկ Ավչյան

National Center of Public Policy Research

www.policyobserver.am

www.facebook.com/PolicyObserver/

Պետգնումներում թղթի ձեռքբերման համառոտ ուսումնասիրություն / 2018-2019թ I կիսամյակ /

Համաձայն պետական գնումների հաշվետվողականության ARMEPS համակարգի միջոցով գեներացվող տվյալների՝ 2019թ. առաջին կիսամյակում գրասենյակային թղթի ձեռք բերման համար հատկացվել է շուրջ 293,3 մլն դրամ, ինչը շուրջ 73 մլն դրամով գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ծախսերը (շուրջ 220,7 մլն դրամ):



2018թ. առաջին կիսամյակում A4 ֆորմատի թղթի 1 տուփի միջին գինը կազմել է 1 619 դրամ, իսկ 1 կգ թղթի միջին գինը՝ 612 դրամ: 2019թ թուղթը ձեռք է բերվել կիլոգրամներով և միջինում 1կգ A4 ֆորմատի թղթի գինը կազմել է 678 դրամ, այսինքն՝ 66 դրամով ավել:

Հարկ է նշել, որ նմանատիպ միտում նկատվել է նաև նախորդ ժամանակաշրջաններում: Մասնավորապես, Արդարադատության ոլորտի 4 մարմինների (Արդարադատության նախարարություն, ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն, ԱՆ քրեակատարողական վարչություն և Դատական դեպարտամենտ) պետգնումների 2017-2018թթ. ուսումնասիրությունները փաստել են, որ 2018թ. թղթային տարբերակից անցումը էլեկտրոնային հարթակին չի հանգեցրել թղթի ծախսի կրճատմանը, այլ հակառակը՝ 2018թ. թղթի ձեռքբերման համար ծախսվել է շուրջ 141 մլն դրամ, ի հակադրություն 2017թ. ծախսված շուրջ 84,4 մլն դրամի (ինչպես նաև նախորդ տարվա համեմատ թղթի ծախսային մասնաբաժինն այս 4 մարմինների ընդհանուր գնումներում ավելացել է մոտ 2 անգամ `2.2%-ից դառնալով 4.5%):

2018թ. առաջին կիսամյակում հնարավոր է նկատել մատակարարների խոշոր կենտրոնացվածություն: Գրասենյակային թղթի 96%-ն ապահովել է Սմարթլայն ընկերությունը: Թեպետ 2019թ-ի առաջին կիսամյակում թղթի ձեռքբերման մրցույթներում հաղթող են ճանաչվել 12 տարբեր ընկերություններ (նախորդ տարվա 8-ի փոխարեն), այնուհանդերձ Սմարթլայն ընկերությունը նորից ունեցել է մեծ մասնաբաժին՝ 81%: Հավելենք, որ Սմարթլայն ՍՊԸ խանութների ցանցը հիմնադրվել է 2004թ. և առավել հայտնի է Կարանդաշ անվանմամբ: Հանդիսանում է խոշոր հարկատու՝ ունենալով և՛ մանրածախ, և՛ մեծածախ վաճառք:

Պետգնումներում վառելիքի ձեռքբերման համառոտ ուսումնասիրություն / 2018-2019թ I կիսամյակ /

Համաձայն վերոնշյալ աղբյուրի 2019թ. առաջին կիսամյակում հանրային մարմինների կողմից ձեռք է բերվել շուրջ 8,1 մլրդ դրամի վառելիք (բենզին և դիզելային վառելիք), ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ շուրջ 2 մլրդ դրամով ավելի քիչ է: Ինչպես հայտնի է, նախորդ տարվա համեմատ 2019թ. Հայաստանում գրանցվել է բենզինի և դիզելային վառելիքի գների նվազում, ինչն էլ հանդիսացել է հանրային գնումների ծախսերի նվազմանը նպաստող գործոններից մեկը: Բացի այդ, ծախսային նվազմանը նպաստել է նաև վառելիքի գնման քանակի փոփոխությունը: Այսպիսով, 2018թ. առաջին կիսամյակում ձեռք է բերվել 8,9 մլն լիտր և 572 հազար տոննա վառելիք, իսկ 2019թ. առաջին կիսամյակում՝ 1,4մլն լիտր (մոտ 6անգամ պակաս) և հազար տոննա (572 անգամ պակաս) վառելիք:

Խոշորագույն վառելիք սպառող կառույցներն են Պաշտպանության նախարարությունը, Ոստիկանությունը, Ազգային անվտանգության ծառայությունը, Պետական պահպանության ծառայությունը և Արդարադատության նախարարությունը:

2018թ I կիս.



2019թ I կիս.



Վառելիքի 41%-ը ձեռք է բերվել նախարարությունների կողմից: Ստորև բերված աղյուսակում կարելի է տեսնել կառուցվածքը:

POLICYOBSERVER NCPPR

Վառելիքի ձեռքբերումն ըստ նախարարությունների 2019թ I կիս.

2,955,886,760	Պաշտպանության նախարարություն
156,650,644	Արդարադատության նախարարություն
103,008,856	Արտակարգ իրավիճակների նախարարություն
19,438,320	Աշխատանքի և սոցիալական հարցերի...
9,382,860	Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական...
9,140,000	Բնապահպանության նախարարություն
8,170,645	Տրանսպորտի կապի և տտ նախարարություն
7,342,000	Տարածքային կառավարման և...
5,450,340	Գյուղատնտեսության նախարարություն
4,892,805	Սպորտի և երիտասարդության հարցերի...
4,564,543	Մշակույթի նախարարություն
4,270,000	Կրթության և գիտության նախարարություն
1,675,800	Արտաքին գործերի նախարարության...
1,480,000	Տնտեսական զարգացման և ներդրումների...
856,800	Սփյուռքի նախարարություն



Վառելիքի ձեռքբերումն ըստ նախարարությունների 2018թ I կիս.



Ի դեպ, ԱԺ կողմից ձեռք բերված վառելիքի ծախսը կրճատվել է 26 մլն դրամով կամ 36%-ով, իսկ Գլխավոր դատախազության, Վարչապետի աշխատակազմի, Նախագահի աշխատակազմի վառելիքի սպառումն ավելացել է համապատասխանաբար՝ 25 մլն, 33 մլն և 3 մլն դրամով:

Հանրային մարմինների կողմից մեծ է պահանջարկը հատկապես ռեգուլյար տեսակի բենզինի նկատմամբ՝ 81 % ընդհանուր վառելիքի կառուցվածքում կամ 4,9 մլրդ դրամ: 2019թ. առաջին կիսամյակի տվյալներով ռեգուլյար տեսակի բենզինը գնվել է 403 դրամ/լիտր միջին գնման գնով:

Հանրային սեկտորի վառելիքի պահանջարկը բավարարող խոշորագույն մատակարարներից են՝ Ֆլեշ ՍՊԸ-ն, ՍիՓիԷս Օիլ ՍՊԸ-ն և Մաքս Օիլ ՍՊԸ-ն: Այս ընկերությունների կողմից մատակարարվող ապրանքատեսակի մի մասը ներկրվել է Բուլղարիայից, իսկ մյուս մասը Ռուսաստանի Դաշնությունից: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Ռուսաստանից ներկրված վառելիքի գնման գինն ավելի մատչելի է, քան Բուլղարիայից ներմուծված վառելիքինը: Օրինակ՝ ռեգուլյար տեսակի բենզինի միջին գնման գինը բուլղարական ապրանքատեսակի համար կազմում է 397 դրամ/լիտր, իսկ ռուսական բենզինի գինը՝ 388 դրամ/լիտր, այսինքն 1 լիտրի հաշվով 9 դրամ պակաս: Նույն սկզբունքով Ռուսաստանից ներկրված պրեմիում տեսակի 1լիտր բենզինի գնման գինը ցածր է 10 դրամով, իսկ ամառային դիզելային վառելիքի գնման գինը՝ 8 դրամով:

	ԲՈՒԼՂԱՐԻԱ	ՌԴ	ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ
ՌԵԳՈՒԼՅԱՐ	397	388	-9
ՊՐԵՄԻՈՒՄ	423	413	-10
ԱՄԱՌԱՅԻՆ ԴԻՁ.ՎԱՌԵԼԻՔ	415	407	-8